

ՀՏԴ 347.5, 342.9

**ՀԱՆՐԱՅԻՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ  
ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ  
ԻՐԱՎԱՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ԲՆՈՒՅԹԻ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԱՐՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Եվրոպական համալսարան*

Հոդվածը նվիրված է հանրային իշխանության ակտերի հետևանքով պատճառած վնասի հատուցման հարաբերությունների իրավական բնույթի հարցին:

Օրենսդրի կողմից հիշյալ հարաբերությունները մի դեպքում որպես մասնավոր-իրավական, մյուս դեպքում որպես հանրային-իրավական դիտարկելու պայմաններում՝ դրանց առանձին տարրերի հետազոտման միջոցով փորձ է արվել վեր հանել վերջիններիս իրական բնույթը:

**Բանալի բառեր.** հանրային իշխանություն, վնասի հատուցում, հանրային և մասնավոր շահ, վերադասություն և ենթակայություն:

Իրավահարաբերությունների հանրային կամ մասնավոր բնույթ ունենալու (հանրային կամ մասնավոր իրավունքի նորմերով կարգավորվելու) հարցին պատասխանելու համար իրավագիտության մեջ սահմանվել են որոշ մոտեցումներ, որոնք ինչպես առանձին վերցրած, այնպես էլ համակցության մեջ հնարավորություն են տալիս պարզելու դրանց բնույթը: Հաջորդիվ բավարար չափով կներկայացվեն այդ մոտեցումները և դրանց լույսի ներքո փորձ կարվի եզրակացության գալ հանրային իշխանության իրականացման ընթացքում պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների բնույթի մասին:

**Առաջին մոտեցման** համաձայն՝ հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հիմքում դրված է այն շահը, որի իրականացման կապակցությամբ դրանք ծագում են:

Եթե իրավահարաբերությունները ծագում են որոշակի անհատի կամ անձանց խմբի շահերը սպասարկելու համար, ապա այդպիսի իրավահարաբերությունները կրում են մասնավոր-իրավական բնույթ: Այն դեպքում, երբ իրավահարաբերությունները ծագում են հանրության շահը սպասարկելու համար, այդպիսիք հանրային-իրավական են:

Շահերից ելնելու մոտեցման վերաբերյալ իրավական դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը և նշել հետևյալը. «*Իրավական շահը դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում՝ շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայման չէ հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը տարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյատևման և հեղափոխ գարգացման համար:» [1]:*

Նշվածից հետևում է, որ իրավական շահը հանրայինի և մասնավորի տարանջատելիս կարևոր է որոշել շահի հասցեատիրոջը և դրա առարկան. եթե շահի կրողը հասարակությունն է և/կամ շահի առարկան համընդհանուր նշանակության արժեքներն են, որոնց կենսագործումը անհրաժեշտ նախապայման է հասարակության բնականոն գործունեության և զարգացման համար, ապա այն որակվում է որպես հանրային:

Շահերով առաջնորդվելու մոտեցումն ունի հետևյալ թերությունը. այն հաշվի չի առնում, որ անհատի և պետության (համայնքի) շահերը շատ դեպքերում կարող են համընկնել, և նման պարագայում դրանց տարանջատումն այլևս չի կարող ընկնել մասնավոր և հանրային իրավահարաբերությունների տարանջատման հիմքում:

**Երկրորդ մոտեցման համաձայն՝** իրավունքը մասնավորի և հանրայինի տարանջատելու հիմքում դրված է այն հանգամանքը, թե ով է իրավասու ձեռնամուխ լինել համապատասխան նորմերի հարկադիր ապահովմանը, երբ դրանք չեն պահպանվում [2, p. 269]:

Այս մոտեցումը սերտ կապ ունի ներկայացված շահերից ելնելու մոտեցման հետ. մասնավոր անձին կվերապահվի անմիջապես իր սեփական շահը երաշխավորող իրավահարաբերությունների (դրանց ընթացքում իրացվող նորմերը) կենսագործման ապահովումը: Արդեն այն շահը, որն արժեքավոր է, սակայն առանձին անձանց համար բավականաչափ նշանակալից չէ, որպեսզի վերջիններս ձեռնամուխ լինեն դրա իրացմանը, որպես հասցեատեր ունի հասարակությանը և դրա կիրառումը կվերապահվի հանրային-իրավական միավորմանը:

Ներկայացված երկրորդ մոտեցումը, ըստ էության հանդիսանալով շահերի մոտեցման շարունակությունը, չեզոքացնում է նաև վերջինիս թերությունը: Եթե իրավական շահի բնույթը միանշանակ չէ, դրանում կարող

է շահագրգռված լինել և՛ անհատը, և՛ հանրույթը, ապա նրանում հանրա-  
յինի կամ մասնավորի գերակայությունը կարելի է պարզել՝ բացահայտե-  
լով այն սուբյեկտին, ում վերապահվում է այդ շահի ապահովումը: Այդ  
դեպքում կախված իրավական շահի կիրառումը երաշխավորող սուբյեկ-  
տից՝ հնարավոր է կանխորոշել, թե ինչպիսին է դրա կապակցությամբ ծա-  
գող իրավահարաբերության բնույթը:

Վերջապես իրավահարաբերության բնույթի որոշման **երրորդ չափա-  
նիշը հետևյալն է**. արդյոք կոնկրետ իրավահարաբերության շրջանակնե-  
րում պետությունը կամ համայնքն իրականացնում է իր հանրային իշխա-  
նությունը, թե ոչ:

Եթե պետությունը կամ համայնքը որևէ իրավունքի նորմի ուժով միա-  
կողմանի կարգադրությամբ դիմում է քաղաքացուն, այսինքն՝ այդ երկուսի  
միջև կա վերադասության և ստորադասության հարաբերություն («ենթա-  
կայություն»), ապա գործ ունենք հանրային իրավունքի հետ [3, էջ 43]:

Անդրադառնալով վարչարարությամբ պատճառված վնասի հատուց-  
ման հարաբերություններին՝ ՀՀ սահմանադրական դատարանը թիվ  
ՍԴՈ-1383 որոշմամբ մասնավորապես նշել է հետևյալը.

«(...) *օրենսդիրը նախատեսել է ոչ իրավաչափ վարչարարությամբ  
պատճառված վնասի հատուցում պահանջելու նախապայման, այն է՝ ոչ  
իրավաչափ ճանաչել վարչական մարմնի իրավական ակտը, գործողույթ-  
յունը կամ անգործությունը, որին օրենքի 100-րդ հոդվածի իրավակարգա-  
վորումների համաձայն կարող է հետևել վարչարարության հետևանքով  
վնաս պատճառած մարմնին **հատուցման պահանջ ներկայացնելը**:  
Այսինքն՝ **պահանջի իրավունքն անձը ձեռք է բերում վարչական մարմնի  
իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին  
վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ ճանաչվելու դեպ-  
քում:***» [4]

Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման խնդիրներին իր  
որոշումներում անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Այսպես,  
ՎԴ/1761/05/14 վարչական գործով 2016 թվականի դեկտեմբերի 26-ին կա-  
յացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը մասնավորապես նշել է  
հետևյալը.

«վարչական մարմինների վարչարարության արդյունքում **պետույթ-  
յան պատրասխանարվությունը ծագում է** հետևյալ պայմանների միաժա-  
մանակյա առկայության դեպքում՝

- իրականացվել է ոչ իրավաչափ (իսկ նույն օրենքով նախատեսված  
դեպքերում՝ նաև իրավաչափ) վարչարարություն,
- պատճառվել է վնաս,

– իրականացված վարչարարության և պատճառված վնասի միջև առկա է պատճառահետևանքային կապ:

(...)Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պետության պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով:» [5]

ՀՀ սահմանադրական դատարանի կողմից տրված «պահանջի իրավունքը անձը ձեռք է բերում վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում», ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կիրառված «պետության պատասխանատվությունը ծագում է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում» և «պետության պատասխանատվության պայմաններն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով» ձևակերպումները թույլ են տալիս եզրակացնել, որ վնասի առաջացմանը հանգեցրած վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչվելուց հետո իրավունքի ուժով անձը ձեռք է բերում պահանջի իրավունք, ինչին հակադրվում է պետության կամ համայնքի պարտականությունը հատուցել պատճառված վնասը, այսինքն՝ նշված սուբյեկտների միջև ծագում է պատճառված վնասի հատուցմանն ուղղված իրավահարաբերությունը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի այլ մեկնաբանություններում նույնպես նշվում է, որ պետության կամ համայնքի պատասխանատվության հիմքերն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով [6, էջ 233]:

Ասվածից հետևում է, որ իրավական վեճի առկայության դեպքում իրավասու մարմինը (որպես կանոն դատարանը) պետք է ընդամենը հաստատի վնասի հատուցման իրավունքի առկայությունը և սահմանի փոխհատուցման չափը:

Հաշվի առնելով, որ վնասի հատուցման նախապայման հանդիսացող ոչ իրավաչափ վարքածի իրավաբանական նկարագրությունը կախված չէ այն մասնավոր անձի կամ հանրային միավորի կողմից կատարված լինելու հանգամանքից՝ գտնում ենք, որ դելիկտին տրված մեկ-երկու սահմանումների ներկայացումը օգտակար կլինի հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման իրավահարաբերությունների բնույթի ուսումնասիրման հարցում:

Հռոմեական իրավունքում դելիկտ էր համարվում դատապարտելի այն վարքագիծը, որն օրենքով պատժվում էր տուժողի օգտին տուգանք

կամ նրան պատճառված կորուստների դիմաց փոխհատուցում կամ երկուսը միաժամանակ վճարելու պարտավորություն իրավախախտի վրա դնելու միջոցով [7, p. 246]:

Մեկ այլ սահմանմամբ դելիկտ է համարվում իրավական պարտակա-նության այնպիսի խախտումը, ինչն այն աստիճան է ազդում անհատի շահերի վրա, որ *օրենքը թույլ է տալիս նրան դրա դեմ բողոքել ոչ թե որպես հասարակության ներկայացուցիչ, այլ հենց իր անունից* [8, p. 4]:

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ հանրային միավորի պատաս-խանատվության հիմքն անձի հանդեպ այդ թվում սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված հիմնական իրավունքների կապակցությամբ ծագող պարտականության խախտումն է: Նման խախ-տումն այն աստիճան է ոտնահարում անձի շահերը, որ դրանք պաշտպա-նելու նպատակով վերջինս ձեռք է բերում կրած զրկանքների դիմաց իր անունից փոխհատուցում պահանջելու իրավունք: Քննարկվող հարաբե-րությունների բովանդակությունը հանգում է փոխհատուցում պահանջելու տուժողի իրավունքին է և այդպիսին վճարելու հանրային իշխանության պարտականությանը:

Նյութական վնասի հատուցման հարաբերություններն ուղղված են անձանց կրած գույքային կորուստների հատուցմանը, նրանց խաթարված գույքային դրության վերականգնմանը: Ասվածից հետևում է, որ նյութա-կան վնասի հատուցման իրավահարաբերություններն ունեն մասնավոր անձանց գույքային բնույթի շահը սպասարկելու, այն ապահովելու նպատակ:

Ոչ նյութական վնասն իր հերթին ներառում է վերապրած հոգեկան կամ ֆիզիկական ցավը և տառապանքները, որոնք, որպես կանոն, անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող ոչ նյութական բարիքների կամ անձ-նական ոչ գույքային իրավունքների ոտնահարման հետևանք են: Նման վնասի դիմաց հատուցման տրամադրումն ուղղված է նշված ոչ նյութական բարիքների և անձնական ոչ գույքային իրավունքների վերականգնմանը: Այսպիսով, ոչ նյութական վնասի հատուցման իրավահարաբերություննե-րը նույնպես ունեն անձանց մասնավոր շահը երաշխավորելու նպատակ:

Հայտնի է, որ քաղաքացիական իրավունքի կարգավորման առար-կայի մեջ ներառվում են նաև անձնական ոչ գույքային բարիքների կա-պակցությամբ ծագող հարաբերությունները:

Թեև քաղաքացիական իրավունքը չի կարգավորում այս հարաբե-րություններն այնչափ համապարփակ, ինչպես գույքային բնույթի հարաբե-րությունները, այնուամենայնիվ այն պաշտպանում է ոչ գույքային բարիք-ները և դրանց կրողներին բոլոր տեսակի ոտնձգություններից [9, ս.39]:

Ասվածից հետևում է, որ քաղաքացիական իրավունքի պաշտպանիչ գործառույթը ներառում է նաև անձանց ունեցած ոչ գույքային բարիքների

և իրավունքների պաշտպանությունը, որն, ի թիվս այլոց, իրականացվում է պատճառված վնասի հատուցման միջոցով, այսինքն՝ դրանց ոտնահարման արդյունքում առաջացած վնասի հատուցման հարաբերությունները ներառվում են քաղաքացիական իրավունքի կարգավորման առարկայի մեջ:

Նշվածի կապակցությամբ հավելենք, որ ՀՀ սահմանադրական դատարանն, օրինակ, իր թիվ ՍԴՈ-871 որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ արդարացվածին պատճառված բարոյական վնասի նյութական եղանակով հատուցման ինստիտուտի կարգավորումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի խնդիրն է [10, կետ 11]:

**ՀՀ քաղաքացիական օրենսգրքի [11] 162-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *Ոչ նյութական բարիքները, սույն օրենսգրքին և այլ օրենքներին համապատասխան, պաշտպանվում են դրանցով նախատեսված դեպքերում ու կարգով, ինչպես նաև այն դեպքերում ու այն սահմաններում, որոնցում քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակների օգտագործումը (հոդված 14<sup>1</sup>) բխում է խախտված ոչ նյութական իրավունքի էությունից և այդ խախտումների հետևանքների բնույթից:*

Նշված նորմին համապատասխան արդեն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2 հոդվածի 1-ին մասում նշվում է, որ **Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման եղանակը, հիմքը և չափը որոշվում են սույն հոդվածին և սույն օրենսգրքի 162.1 հոդվածին համապատասխան:**

Սույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **Ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Եթե սույն օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված հիմնարար իրավունքը խախտվել է տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, ապա ոչ նյութական վնասը հատուցվում է համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:**

Ներկայացված նորմերից կարելի է եզրակացնել, որ խոսքը վերաբերում է հենց հանրային իշխանության կողմից հիմնարար իրավունքների խախտման հետևանքով ծագած ոչ նյութական վնասի հատուցման մասին, որի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հետևաբար ունեն մասնավոր իրավական բնույթ:

<sup>1</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածն իրավունքի պաշտպանության միջոցների շարքին է դասում նաև պատճառված վնասի հատուցումը:

«Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիշյալ նորմը ներառում է, օրինակ, անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման դեպքը, իսկ պետության կողմից անձին դատապարտելն ակնհայտաբար հանրային իշխանության իրականացում է:

Եթե ճանաչվում է, որ անարդարացի դատապարտման հետևանքով անձին պատճառված ոչ նյութական վնասի հատուցման իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական բնույթ ունեն, ապա այս մասնավոր պնդումը պետք է տարածել հանրային իշխանական բնույթի բոլոր արարքների հետևանքով պատճառված վնասի հատուցման հետ կապված հարաբերությունների վրա: Հանրային իշխանության պատճառած վնասի հատուցման հարաբերությունների բնույթը չի կարող փոփոխվել՝ յուրաքանչյուր առանձին դեպքում դրա դրսևորման տարբեր ձևեր ունենալու պատճառով:

Արդեն նշել ենք, որ պետության և անհատի շահերը շատ դեպքերում կարող են համընկնել: Այդպես է նաև մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներում: Նրանց պաշտպանությունը, ինչպես երևում է «Սահմանադրության 3-րդ, 23-81 հոդվածներից, Հայաստանի Հանրապետության նշանակալից և կարևոր խնդիրներից է, բայց այն **ակնհայտորեն նաև յուրաքանչյուր առանձին քաղաքացու հիմնարար անձնական շահն է** [3, էջ 41]:

«Վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/0441/02/16 վարչական գործով կայացված որոշմամբ նշել է հետևյալը. «վարչական մարմնի կողմից պատճառված վնասի հատուցման պարտականությունը ծագում է պատշաճ վարչարարության ապահովման միջոցով մարդու հիմնարար իրավունքների երաշխավորված իրականացմանն ուղղված հանրային շահի կենսագործման կապակցությամբ:» [12]

Գտնում ենք, որ նման դիրքորոշումը ամբողջապես չի արտահայտում իրական պատկերը և անտեսում է այն, որ անձին պատճառված վնասի հատուցումը **հանդիսանում է նաև նրա էական անձնական շահը**: Այն, որ հանրային իշխանության սահմանադրական պարտականությունն է պաշտպանել անձանց հիմնական իրավունքները (այդ թվում իր կողմից պատճառված վնասի դիմաց հատուցում տրամադրելու միջոցով) դեռևս չի կարող վկայել այն մասին, որ վնասի հատուցմանն ուղղված հարաբերությունները ծագում են հենց հանրային շահի կապակցությամբ և ունեն հանրային-իրավական բնույթ:

Նկարագրված իրավիճակում, երբ մի կողմից պատճառված վնասի հատուցման մեջ շահագրգիռ է հանրային իշխանությունը, մյուս կողմից այն ակնհայտաբար հանդիսանում է առանձին անհատի հիմնարար շա-

հը, քննարկվող հարաբերության բնույթի բացահայտման համար օգտավետ է պարզել, թե իրավունքի որ սուբյեկտի վրա է դրված դրա փաստացի իրականացման ապահովումը՝ որոշելով, թե ում շահն է ավելի գերակա:

Վերն արդեն ներկայացրել ենք, որ իրավունքի նորմի (իրավահարաբերության) մասնավոր կամ հանրային լինելը որոշելիս պետք է ուշադրություն հրավիրել, մասնավորապես այն հանգամանքին, թե ով է առաջընթաց միջոցներ ձեռնարկում այն փաստացի կյանքի կոչելու համար: Եթե իրավական շահն ապահովվում է անհատի (կազմակերպության) ջանքերով, ապա այն ունի մասնավոր բնույթ և հակառակը:

Հանրային շահի հասցեատերը միշտ հասարակությունն է, այդ իսկ պատճառով որոշակի առանձին աճը միջոցներ չի ձեռնարկում այն փաստացի կյանքի կոչելու համար: Արժեքավոր այն շահը, որն առանձին անհատի համար բավարար չափով նշանակալից չլինելու հետևանքով՝ նրա անմիջական հոգաձությանը չի արժանանում, երաշխավորվում է հանրային միավորի կողմից և ընկալվում է որպես հանրային:

Եթե հավասարապես թե՛ հանրային միավորը, թե՛ առանձին մասնավոր անձը կարող են նախաձեռնել հանրային իշխանական ակտերը ոչ իրավաչափ ճանաչելը, ապա դրանց արդյունքում պատճառված վնասի հատուցման հարաբերությունների փաստացի իրականացումն ապահովելու բեռը միշտ դրված է մասնավոր անձի վրա:

**«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի [13] 100-րդ հոդվածի համաձայն՝**

1. Վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա:

2. Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

**Նույն օրենքի 102-րդ հոդվածի համաձայն՝**

1. Վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան:

2. Վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

Նշված նորմերից հետևում է, որ օրենսդիրը վնասի դիմաց հատուցում տրամադրելը նախաձեռնելու բեռը դնում է տուժողի վրա, ով և պետք է հիմնավորի վնասի և ոչ իրավաչափ վարչարարության հետ դրա պատճա-



ռահետևանքային կապի մասին փաստերը և կրի դա չկարողանալու բացասական հետևանքները (վարչական վարույթում ապացուցման բեռի մասին տե՛ս հիշյալ օրենքի 43-րդ հոդվածը): Անձն ինքը պետք է հետապնդի այդպիսի շահը, իսկ վարչական մարմինը, դիմումի բացակայության դեպքում, նման նախաձեռնությամբ հանդես չի գա. Ավելին՝ հիշյալ օրենքի 101-րդ հոդվածը սահմանում է վարչական մարմնին դիմելու ժամկետները, որոնք բաց թողնելու դեպքում վերջինս մերժում է վնասի հատուցման անգամ իրավաչափ պահանջը:

Նույնպիսի իրավիճակ է նաև հանրային իշխանության իրականացմամբ պատճառված վնասի հատուցման այն հարաբերություններում, որոնք կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով: Վնասը կամավոր չհատուցելու դեպքում տուժողն ինքը պետք է հայց հարուցի դատարան, ապացուցի իր պահանջի իրավաչափությունը և հասնի իր իրավունքի փաստացի իրականացմանը:

Հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման նորմերի սահմանմամբ մասնավոր շահը երաշխավորելը, ինչպես նաև դրանց կենսագործումը մասնավոր սուբյեկտի վրա թողնելը (**ինչը հիմնավորում է այս հարաբերություններում մասնավոր շահի գերակայությունը**) վկայում են նրա օգտին, որ այդպիսի նորմերն ունեն մասնավոր-իրավական բնույթ:

Ինչպես նշել ենք, հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման հարաբերությունների բնույթը պարզելիս կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե արդյոք նման հարաբերություններում պետությունը կամ համայնքը իրականացնում են իրենց հանրային իշխանությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքում հանրային իշխանության կողմից պատճառված վնասը հատուցելու մասին նորմեր նախատեսելը (հոդվածներ համար 1063, 1064. 1087.2, 1087.3, 162.1) վկայում է, որ օրենսդիրը դրանք դիտում է որպես հորիզոնական, արտապայմանագրային գույքային հարաբերություններ, որոնց շրջանակներում պետությունը կամ համայնքը պարտավոր է հատուցել իր պատճառած վնասը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-102-րդ հոդվածներից էլ հետևում է, որ նույն օրենսդիրը տրամադորեն հակառակ մոտեցում է որդեգրել և վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը դիտել է որպես հանրային իշխանական լիազորություն:

Անդրադառնալով վարչարարությանը վերաբերող վերը հիշատակված նորմերին՝ ՀՀ վճռաբեկ դատարանը հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին անձի դիմումը՝ ուղղված իրավասու վարչական մարմնին (...), սահմանված ընդհանուր կարգով **վարչական վարույթ հարուցելու**

**հիմք է: Ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պահանջով դիմելով համապատասխան վարչական մարմնին՝ շահագրգիռ անձը հայցում է իր պահանջի բավարարման վերաբերյալ բարենպաստ վարչական ակտի ընդունում:**» [14] :

Այսպիսով՝ հանգում ենք այն եզրակացության, որ համաձայն ՀՀ օրենսդրության՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ ներկայացված պահանջի կապակցությամբ հանրային իշխանությունը, ի դեմս վնասը պատճառած վարչական մարմնի, պետք է ընդունի այն բավարարելու կամ մերժելու մասին **վարչական ակտ:**

Հանրային իրավահարաբերության բովանդակությունը հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորության իրականացման պարտականությունն է:

Վարչական ակտին բնորոշ հատկանիշներն են՝ անհատական ակտ լինելը, արտաքին ներգործությունը, **հանրային իրավունքի ոլորտում ընդունված լինելը**, կոնկրետ գործի կարգավորումը, իրավունքների և պարտականությունների սահմանումը, փոփոխումը, վերացումը կամ ճանաչումը [15]:

Վերն արդեն հիշատակված թիվ ԵԿԴ/0441/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանը, ևս մեկ անգամ անդրադարձ կատարելով վարչարարության հետևանքով պատճառված վնասի հատուցման իրավահարաբերություններին, նշել է, որ «**քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն այդ վարչական մարմնի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման, այն է՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պարտականությունն է.** (...)»:

Հիշատակված թիվ ՎԴ/0832/05/16 վարչական գործով կայացված որոշմամբ արդեն սահմանելով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պարտականության բովանդակությունը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ «**պատճառված վնասի հատուցման պարտականությունը կրողը Հայաստանի Հանրապետությունն է կամ համայնքը, որոնք այդ պարտականությունը կատարում են համապատասխան վարչական մարմնին ներկայացված՝ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված վնասը հատուցելու դիմումի հիման վրա **հարուցված վարչական վարույթի շրջանակներում նշված դիմումը քննարկելու և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում այն բավարարելու մասին որոշում ընդունելու միջոցով:****»

Գտնում ենք, որ վարչարարությամբ պատճառված վնասին վերաբերելի օրենսդրական կարգավորումները և դրանց հիմնավորմանը միտված ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները սխալ են:

**Առաջին**, հանրային իշխանության կողմից պատճառված վնասի հատուցման իրավունքը նյութաիրավական բնույթի գույքային իրավունք է՝ սահմանադրաիրավական իմաստով սեփականություն (գույքային իրավունքը գույք է՝ սեփականություն), ինչին հակադրվում է պետության կամ համայնքի պարտականությունը տրամադրելու համապատասխան հատուցում:

Երբեք վնասի հատուցման պարտականությունը չի կարող հանգել իր բնույթով վարության նշանակություն ունեցող այնպիսի գործընթացի հետ, ինչպիսին է իրավունքը խախտած վարչական մարմնի կողմից վնասի հատուցման պահանջը քննելը և դրա կապակցությամբ որոշում կայացնելը:

**Երկրորդ**, նման վնասի հատուցումը չի կարող դիտվել որպես պետության կամ համայնքի կողմից իրենց իշխանական լիազորությունների իրականացում:

Մեր պատկերացմամբ որոշակի իրավահարաբերության շրջանակներում հանրային իշխանությունն առաջին հերթին հանդես է գալիս իրավախախտի դեմ, ով իր կողմից թույլ տրված խախտման համար պետք է կրի պատասխանատվություն: Օբյեկտիվ իրավունքն, իրացնելով իր պաշտպանիչ գործառույթը, իրավախախտի վրա է դնում սուբյեկտիվ իրավունքը վերականգնելու պարտականությունը, որի շրջանակներում ենթակայության և ստորադասության կապերի մասին խոսք գնալ չի կարող:

Իշխանությունը՝ որպես սեփական կամքին ենթարկեցնելու կարողություն, սահմանվում է որպես կառավարելու, հրամայելու, կարգադրելու իրավունք [16]:

Ինչպես վերը ներկայացվել է պետության կամ համայնքի պատասխանատվությունը ծագում է ոչ իրավաչափ ակտերի հետևանքով առաջացած վնասի ուժով: Իրավախախտման ուժով գույքային պարտավորություն ստանձնելու և այն կատարելու տեսքով պատասխանատվություն կրելով՝ հանրային միավորը չի կառավարում, հրամայում կամ կարգադրում, այլ վերականգնում է սուբյեկտիվ իրավունքը՝ տուժողի հետ հարաբերություններում հանդես գալով հավասար հիմունքներով:

Հանրային միավորի կողմից պատճառած վնասի հատուցման առանձնահատկություններից մեկը, ինչպես հետևում է ներկայացված շարադրանքից, կայանում է նրանում, որ այս դեպքում սուբյեկտի դրսևորած վարքագծի ոչ իրավաչափ լինելն արտահայտվում է իշխանական ակտի ապօրինության մեջ:

Ասվածից հետևում է, որ վնասի հատուցման հարցի շրջանակներում կարող է ծագել երկու տեսակի իրավական վեճ.

**Առաջին** այն վեճն է, որը ծագում է հանրային իշխանական ակտի օրինականության հարցի շուրջ:

**Երկրորդն** այն վեճն է, որը ծագում է հանրային իշխանական գործունեությամբ վնաս պատճառված լինելու, դրա չափի, հատուցման եղանակի հետ կապված հարցերի կապակցությամբ: Այլ կերպ ասած, խոսքն այն վեճերի մասին է, որոնք բխում են կողմերի միջև ձևավորվող գույքային բնույթի իրավական կապերից: Հանրային իշխանության և անձի միջև ծագող գույքային բնույթի իրավական կապի մեջ էլ հենց դրսևորվում են բուն վնասի հատուցման հարաբերությունները, որոնց բնույթի ներկայացմանն էլ նվիրված է սույն հոդվածը:

Առաջին խումբ հարաբերությունները գտնվում են հանրային իրավունքի ոլորտում, քանզի դրա նորմերով են սահմանվում հանրային իշխանական բնույթի լիազորությունները և դրանց իրականացման կարգը: Արդեն երկրորդ խումբ հարաբերությունները, որոնք իրենց բնույթով գույքային են և հանրային իշխանության իրականացում չեն ենթադրում, հանրային իրավունքի **ոլորտում չեն գտնվում, և դրանց կապակցությամբ վարչական ակտեր չպետք է կայացվեն: Երկրորդ խումբ հարաբերություններում հանրային միավորը և տուժողը պետք է հանդես գան որպես պարտապան և պարտատեր:**

Վնասի հատուցման պահանջի բավարարումը հնարավոր է միայն հանրային իշխանական ակտը ոչ իրավաչափ ճանաչելու դեպքում, և հետևաբար երկու խումբ փոխկապակցված իրավական վեճերի միաժամանակյա առկայության պարագայում՝ նպատակահարմար է դրանց լուծումը պատվիրակել հանրային իրավական վեճը լուծող ատյանին, ով կկիրառի նաև վերաբերելի մասնավոր իրավանորմերը:

Այն դեպքում, երբ առանձին կարգով հանրային իշխանական ակտն արդեն իսկ ճանաչվել է ոչ իրավաչափ, ապա կողմերի միջև ծագող բուն գույքային վեճը, գտնում ենք, պետք է պատվիրակվի մասնավոր վեճեր քննող ատյանին: Այս հարցերի լուծումը վարչական ակտի կայացմամբ միջնորդավորելը, մեր պատկերացմամբ, ընդունելի մոտեցում չէ:

**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ**

1. Թիվ ՎԴ/0823/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից «22 ապրիլի 2016 թ.-ին» կայացված որոշում :
2. **Randy E. Barnett**, Four Senses of the Public Law-Private Law Distinction, Foreword to the “Symposium on the Limits of Public Law,” 9 Harv. J.L. & Pub. Pol’y 269 (1986)., pages 267-276  
(<https://scholarship.law.georgetown.edu/cgi/viewcontent.cgi?article=2562&context=facpub> (վերջին մուտք՝ 14 մարտի 2020 թվական):
3. **Հ. Թովմասյան, Օ. Լոխթերհանդթ, Գ. Մուրադյան, Վ. Պողոսյան, Վ. Ռայմեր, Ռ. Ռուբել**, Հայաստանի Հանրապետության ընդհանուր վարչական իրավունք, – Եր.: Բավիդ, 2011 թ., 424 էջ:
4. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից «07.11.2017 թ.ին» կայացված համար ՍԴՈ-1383 որոշում:
5. Թիվ ՎԴ/1761/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի «26 դեկտեմբերի 2016-ին» կայացված որոշում:
6. **Հ. Թովմասյան, Գ. Մուրադյան, Հ. Թորոսյան, Վ. Գրիգորյան, Վ. Պողոսյան**, Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ.- Եր.: Տիգրան Մեծ, 2015 թ., 364 էջ:
7. **David Johnston, ed.,** The Cambridge companion to Roman law. 1st ed; Cambridge University Press: New York, 2015; 553 pages.
8. **John Murphy, Christian Witting** Street on torts. 13th edition; Oxford University Press: Oxford, 2012; 818 pages.
9. **Под ред. Б.М. Гонгало.** Гражданское право; Учебник. в. 2 т./ Т. 1. 2-е изд. перераб. и доп, изд.Статут, Москва, 2017 г. 511 ст.
10. ՀՀ սահմանադրական դատարանի կողմից «30 մարտի 2010-ին» կայացված համար ՍԴՈ-871:
11. 05.05.1998-ին ընդունված ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
12. Թիվ ԵԿԴ/0441/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից «7 ապրիլի 2018 թվականին» կայացված որոշում:
13. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք ընդունված «18.02.2004-ին»:
14. Թիվ ՎԴ/0832/05/16 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի «30.11. 2018 թվականի» որոշում:
15. Թիվ ՎԴ/4651/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի «30.04.2015 թվականի» որոշում:
16. Ժամանակակից հայոց լեզվի բառարան; Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1972:

**ОСОБЕННОСТИ ХАРАКТЕРА ПРАВООТНОШЕНИЙ ПО  
ВОЗМЕЩЕНИЮ УЩЕРБА, ПРИЧИНЕННОГО В РЕЗУЛЬТАТЕ АКТА  
ПУБЛИЧНОЙ ВЛАСТИ**

**АРМАН ГРИГОРЯН**

---

*Европейский университет*

---

Статья посвящена вопросу характера правоотношений по возмещению ущерба причиненного актам публичной власти.

В условиях рассматривания законодателем упомянутых отношений в одних случаях как частноправовых, в других как публично-правовых, посредством изучения их отдельных элементов предпринята попытка выявить подлинный характер последнего.

**Ключевые слова:** публичная власть, возмещение вреда, частный и публичный интерес, превосходство и подчинение.

**CHARACTERISTICS OF THE LEGAL RELATIONSHIP OF THE  
COMPENSATION FOR DAMAGE CAUSED BY ACTS OF PUBLIC  
AUTHORITY**

**ARMAN GRIGORYAN**

---

*European University*

---

This article is devoted to the issue of the legal character of the relationships of the compensation for damage caused by acts of public authority.

In circumstances, when the legislator considers the mentioned relationships as private in one case and as public in another one, through the examination of their separate elements, an attempt is made to reveal the true character of the latter.

**Keywords:** public authority, compensation for damage, public and private interest, superiority and submission.

*Ներկայացվել է խմբագրություն 25.03.2020  
Երաշխավորվել է տպագրության 27.04.2020*